

Է. Կ. ԼԱՎԶՅԱՆ

ԱՍԵՂՆԱՏԵՐԵՎ ԵՎ ՄՇՏԱԴԱԼԱՐ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ
ԿՏՐՈՒԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁ


Երևանի պայմաններում ներմուծված ծառերի ու թփերի որոշ մասը համարլաթե անհնարին է բազմացնել սերմերով: Ալսավես, օրինակ՝ գիհիների և մի շարք այլ տեսակների սերմերը ծլում են երկրորդ տարում, ցուցաբերելով ցածր ծլունակություն: Մշտադալար սաղարթավոր տեսակներից տոսաւոր և ճապոնական իլենին բոլորովին չեն պաղարերում:

Նկատի ունենալով արդ մենք 1952—1956 թթ. փորձել ենք ալդափիսի մի շարք բույսեր բազմացնել կտրոններով: Ասեղնատերեներից փորձել ենք գիհի կազակական — *Juniperus sabina* L., գ. սովորական — *J. communis* L., գ. վիրգինյան — *J. virginiana* L., գ. երկարավուն — *J. oblonga* M. B., սեկվոյանկանական — *Sequoiadendron giganteum* Lindl., կենի — *Taxus baccata* L., հղենի մոխրակապտավոն — *Picea pungens* Eng. v. *glaucia* Beissn., ե. արեգական — *Picea orientalis* L., ե. սովորական — *P. excelsa* Link., կենսածառ արևմըսարան — *Thuja occidentalis* L. Մշտադալար տեսակներից՝ տոսախ մշտականաչ — *Buxus sempervirens* L. և իլենի ճապոնական — *Eownymus fortunei* (Turcz.).

Կտրոնները վերցված են 15—20 տարեկան բույսերից: Գրականության տվյալների համաձայն գիհիների կտրոնները ընդունված է վերցնել նրանց միամյա շիվերից լրիվ փայտացման վիճակում՝ աշնանից մինչև գարնան հլութաշարժության սկավելը (Ն. Ի. Կիչոնով, 1930, Ի. Ի. Վերտեպնի, 1955, Ն. Կ. Վերիշև, 1934 և ուրիշներ):

Մեր փորձերում գիհիների և կենսածառի կտրոնները վերցվել են մեծ մասամբ գարնան վերջին և չնալած դրան հաջող արդյունք է ստացվել: Մնացած ասեղնատերեն և մշտադալար տերևավոր տեսակներից կտրոնները վերցվել են աշնանը կամ ամառվա սկզբներին:

Գիհիների և կենսածառի կտրոնները պատրաստվել են միամյա շիվերից բութակով (նկ. 1): Նրանց կտրոնները նախօրոք մշտակավել են հետերոպառուքսինի 0,02 տոկոս լուծույթում՝ 20 ժամ տեղությամբ: Կենսածառի



Նկ. 1. Բութակով կտրոն (*Juniperus sabina* L.).


կտրոնները խորասուզված են եղել 0,02 տոկոսանոց նավթոքովի քացախաթթվի, աղաթթվային խիճինի և 2—4 դիմուր ֆենոքսի-քացախաթթվի լուծութեներում 4 և 20 ժամ։ Մյուս տեսակների կտրոնները փորձարկվել են առանց ստիմուլատորների կիրառման։

Կտրոնները ստիմուլատորներով մշակելուց հետո լվացվել են մաքուր շրով և տնկվել խոնավ ավազի մեջ՝ արկդներում։ Վերջիններս պահպել են շերմոցներում։ Զերմոցներից մեկը ծածկված է եղել 3 շերտ մառլայով պատած շրջանակով, մյուս շերմոցը՝ ապակյա շրջանակով և ներսի կողմից ներկվել է կրաշրով։

Մառլայով ծածկված շերմոցում օդի շերմաստիճանը եղել է 20—24, իսկ մլուսում՝ 24—30։ Փորձի ընթացքում կտրոնները շրվել են ցնցուղով, օրը երեք անգամ։ Արմատակալած կտրոնները տնկվել են փոքրիկ թաղարների մեջ և 4—5 օր պահպել են ստվերուտ տեղում, որից հետո տեղափոխվել լուսավոր տեղի ծագոնական իլենին պահպել է ստվերուտ տեղում։ Աշնանը կտրոնաբույսերը պահպել են շերմատանը, իսկ գարնանը՝ տեղափոխվել բաց գրունտ։

Փորձերից պարզվեց, որ (աղլուսակ 1) ամենից հաջող արմատակալում են ստվերական և վիրզինան գիհիների այն կտրոնները, որոնք վերցված են մայիսի 19-ին, և 130—160 օր եղել են մառլայով ծածկված շերմոցում։

Հետերոառաքսինով մշակված և կոնտրոլ կտրոնները լրիվ արմատակալում են, այն տարբերությամբ, որ կոնտրոլ կտրոններն արմատակալում են մեկ ամիս ուշացումով և առաջացնում են ավելի թուլ արմատներ։



Նկ. 2. Նոր արմատակալած կտրոններ, ձախից դեպի աջ — *Juniperus communis* L., *J. virginiana* L., *J. oblonga* M. B.

Կազակական և երկարավուն գիհիների կտրոնները որոնք վերցվել են մայիսի վերջին և տնկվել են մառլայով ծածկված շերմոցում, արմատակալում՝ են 210—221 օրում, 65—100 տոկոս Գիհիների կտրոնները արմատակալելուց հետո առաջին տարին աճում են դանդաղ, տալով միայն 4 սմ աճ։ Երկրորդ տարին նրանց աճը հասնում է 15—20 սմ-ի։ 10 տարեկան կտրոնաբույսերը արդեն ունեն 100—150 սմ բարձրություն և իրենց կենտրոնակությամբ չեն տարբերվում սերմարտլուսերից։

Աղյուսակ I

Գիճիների կտրոների արմատակալումը


Տեսակների անվանումը	Կարունիներ գեղցի ներուժ ժամանակը	Արմատակալում ամենալավ	Արմատակալման տոկոսը		
			Ժամանակի ծածկելու շերտը	Առաջնայի ծածկելու շերտը	Բանական օրունք արմատակալում
1	2	3	4	5	6
<i>Juniperus communis</i>	6/5	հետերոպուբսին	80	36	130
	»	կոնտրուլ	36	36	165
	19/5	հետեր.	100	60	140
	»	կոնտրուլ	100	75	160
	31/5	հետեր.	90	70	130
	»	կոնտրուլ	95	75	158
<i>virginiana</i>	6/5	հետեր.	8	8	138
	»	կոնտրուլ	4	4	165
	19/5	հետեր.	100	50	160
	»	կոնտրուլ	85	20	160
	31/5	հետեր.	50	35	138
<i>sabina</i>	6/5	հետեր.	35	—	210
	»	կոնտրուլ	15	—	210
	19/5	հետեր.	55	40	221
	»	կոնտրուլ	65	0	»
	31/5	հետեր.	100	65	»
<i>oblonga</i>	»	կոնտրուլ	75	50	»
	19/5	հետեր.	55	55	221
	»	կոնտրուլ	60	20	»
	31/5	հետեր.	90	50	»
	»	կոնտրուլ	65	10	»

Արևմտյան կենսածառի կտրոնները ամենից հաջող արմատակալում են (աղյուսակ 2) նշված ստիմուլատորների լուծուլթում 4 ժամ պահելու դեպքում, իսկ 20 ժամ պահելիս արմատակալման տոկոսը զգալիորեն իջնում է:

Աղյուսակ 2

Տարբեր ստիմուլատորների լուծույթում խորասուզման ակտուարյան ազդեցությունը արևմտյան կենսածառի կտրոնների արմատակալման վրա (տնկման ժամկետը (6/VI))

Ստիմուլատորների անունը	Քանի ժամ է պահպաժ լուծուլթում	Արմատակալ- ման տոկոսը	Քանի օրունք արմատակալել
1	2	3	4
Հետերոպուբսին	4	40	60
» 20	35	»	
Նավթոքսի-քացախաթթու	4	50	»
» 20	35	»	
Աղաթթվային խինին	4	65	80
» 20	20	»	
2-գիքլոր ֆենոքսի քացախա- թթու	4	50	»
» 20	20	80	
Կոնտրուլ (լուր)	4	15	»
» 20	0	»	



Նկ. 3. Նոր արմատակալած կորոններ. ձախից դեպի աջ— *Sequojadendron giganteum* Lindl.
Taxus baccata L., *Picea pungens* Eng. v. *glaucia* Beissn., *Picea excelsa* Link.

Կենսածառի կտրոնները արմատակալում են հեշտությամբ 60 օրում: Թութակի շուրջը կազմակերպվում է առատ կալյուս և գոյանում են բազմաթիվ սեմեղ արմատներ: Կտրոնաբույսերը աճում են դանդաղ և 10 տարեկան հասակում անենում են միախ 50—60 սմ բարձրություն: Հաշվի առնելով այդ ժանգամանքը կտրոններով նպատակահարմար է բազմացնել միախ կենսածառի հազվագույն պարտիվային ձևերը:

Մնացած փորձարկված ասեղնատերեկ տեսակների կտրոնավորման տըլլալները բերված են 3-րդ աղյուսակում:

Սեկվոլայի կտրոնները վերցված օգոստոսի 10-ին առանց ստիմուլատոր-ֆերով մշակման արմատակալել են 240 օրում՝ 90 տոկոսով: Առաջանում են ասկավաթիվ, բայց շատ երկար և բարակ արմատներ, իսկ բույսերը առաջին վեգետացիալի ընթացքում տալիս են 10—12 սմ: Դժբախտաբար սրա կըսորնաբույսերը գրունտ տեղափոխելուց հետո մեծ մասամբ ոչնչանում են, քանի որ սեկվոլան վատ է հարմարված: Երկունի հողակլիմալական պայմաններին նույնը վերաբերվում է և կենուն (*Taxus baccata* L.), որի հոկտեմբերի 15-ին վերցված կտրոնները մեկ տարվա ընթացքում արմատակալում են 80 տոկոսով: Դրունտ տեղափոխված կտրոնաբույսերը ոչնչանում են երկորդ տարում, կլիմալի չորության պատճառով:



Նկ. 4. Գիհիների կտրոնաբույսեր 2 տարեկան հասակում: ձախից աջ—
Juniperus communis L., *J. sabina* L.

Հստ գրականության տվյալների, եղենու տեսակները կտրոններով խիստ գժվար են բազմանում, որը հաստատվեց և մեր փորձերում: Փորձարկված երեք տեսակների (հ. արևելյան, արծաթափակ և սովորական) կտրոնները, որոնք վերցված էին հոկտեմբերի 15-ին, արմատակալել են ընդամենը 24—32 տոկոսով:


Այս տեսակների կտրոնները արմատակալեցին 7 ամսից հետո և առաջին տարում ավեցին միախ 2—3 սմ աճ: Պարզվում է, որ եղենու կտրոնները արմատակալման շրջանում պետք է գտնվեն լուսավորված տեղում: Բացի

դրանից նշված տեսակների չփալտացած կտրոնները բոլորովին չեն արմատակալում:

Աղյուսակ 3

Ասեղնատերև տեսակների կտրոնների արմատակալման ընթացքը ըստ ամիսների

Տեսակների անվանումը	Կտրոն վերջնինը ժամանակը	Արմատակալման տոկոսը									
		Բանի օգոստ է սկզբան սկզբանական	Հունիսի աղյուսակը	Հունիսի աղյուսակը	Հունիսի աղյուսակը	Հունիսի աղյուսակը	Հունիսի աղյուսակը	Հունիսի աղյուսակը	Հունիսի աղյուսակը	Հունիսի աղյուսակը	Հունիսի աղյուսակը
Sequoiaadendron giganteum	15/9	120	20	20	40	30	—	—	—	—	—
Taxus baccata	15/10	300	—	—	—	—	—	—	—	20	60
Picea pungens v.glaucā	20/6		զ ի	ա բ ժ ա ա ա կ ա լ ի լ							
	15/10	210	—	—	—	—	12	8	4	—	—
· orientalis	20/6		զ ի	ա բ ժ ա ա ա կ ա լ ի լ							
·	15/6	—	—	—	—	—	20	12	—	—	—
· excelsa	20/6		զ ի	ա բ ժ ա ա ա կ ա լ ի լ							
·	15/10	—	—	—	—	4	20	—	—	—	—



Նկ. 5. Գիհիների 10 տարեկան կտրոնաբույսեր. ձախ—Juniperus communis L.,
աջ—J. sabina L.

Նշանվուսակից պարզվում է, որ տոսախի աշնանը վերցրած կտրոնները ավելի հաջող արմատակալում են զերմատան պարմաններում (90 տոկոս), որտեղ օդի շերմաստիճանը և հարաբերական խոնավությունը ավելի բարձր է: Հունիսին վերցրած կտրոնները փալտացած չլինելու հետևանքով ոչնչանում են մի քանի օրում: Այս պատճառով էլ տոսախի կտրոնները պետք է վերցնել աշնանը:

Ճապոնական իլենու համար նույնպես ավելի պիտանի են աշնանը վերցրած կտրոնները, որոնք մեր փորձերում արմատակալեցին 100 տոկոսով: Ճապոնական իլենու կտրոնները պետք է արմատակալեցնել ցրված լույսի տակ և խոնավ օդի պայմաններում:

Աղյուսակ 4

Տերեավոր մշտադալար տեսակների կտրոնների արմատակալման արդյունքները

Տեսակների անգանումը	Կտրոնների անգանումը	Կտրոնի արմատակալման տոկոսը			Քանի օրովաճառականությունը	
		Զերմոցում		Չերմաստակալման տոկոսը		
		մառլյայով ծածկված	ապակիով ծածկված			
Buxus sempervirens	15/9	12	36	90	50	
Evonymus fortunei	15/9	—	—	100	20	
	15/9	—	—	40	30—50	

Կատարված փորձերը հնարավորություն են տալիս անելու հետեւալ եղակացությունը:

1. Դիմիների կտրոնները կարող են արմատակալել ոչ միայն աշնան և ձմռան ընթացքում այլև գարնանը (մայիսի երկրորդ կեսին) և մինչև անգամ ամռան սկզբներին — հունիսին:

2. Հետերոպուքսինը բարձրացնում է գիմիների կտրոնների արմատակալման տոկոսը:

3. Արեմայան կենսածառի կտրոնները ավելի հաջող են արմատակալում հետերոպուքսինով և այլ ստիմուլատորներով՝ 4 ժամ մշակվելու դեպքում:

4. Հաջող արմատակալում են սեկվոյալի և կենու աշնանային (սեպտեմբեր, հոկտեմբեր) կտրոնները առանց ստիմուլատորների:

5. Ցուսալի և ճապոնական իլենու կտրոնավորումը նպատակահարմար է կատարել աշնանը, առաջինը համեմատաբար բարձր ջերմաստիճանի պայմաններում (20 և բարձր), իսկ երկրորդը՝ բարձր խոնավության և ստվերոտ պայմաններում:

Է. Կ. ԼԱՎՅԱՆ

ОПЫТ ЧЕРЕНКОВАНИЯ НЕКОТОРЫХ ХВОЙНЫХ И ВЕЧНОЗЕЛЕНЫХ ЛИСТВЕННЫХ ПОРОД

Р е з ю м е

В течение 1955—1958 годов в Ереванском ботаническом саду испытывалась возможность черенкового размножения нескольких видов можжевельника, туи западной, секвойи гигантской, ели, бересклета Форчуна и самшита. Наряду с посадкой необработанных черенков применялось воздействие химическими стимуляторами (гетероауксин, 2—4-дихлорфеноксикусусная кислота, солянокислый хинин, нафтилуксусная кислота).

В соответствии с литературными данными выяснилось, что в условиях Еревана лучшей укореняемостью черенков характеризуются среди

хвойных виды можжевельника, туя западная, секвоя гигантская и тисс европейский; плохо укореняются виды ели.

Выяснено, что можжевельники (обыкновенный, виргинский, продолговатый, казацкий) и тую западную можно успешно черенковать даже в мае и июне (туя), хотя в литературе обычно рекомендуются осенне-зимние и, реже, весенние сроки черенкования. Применение химических стимуляторов в большинстве случаев повышает процент укоренения и ускоряет последнее. Черенки самшита обыкновенного хорошо укоренялись при осенней посадке в условиях повышенной температуры (более 20°C), а черенки бересклета Форчуна—при осенней посадке в условиях высокой влажности воздуха и притенения.

Черенковое размножение можжевельников и туи западной позволило ускорить их внедрение в зеленое строительство Ереванского ботанического сада.

Л И Т Е Р А Т У Р А

1. Верзилов В. Ф. Стимуляторы роста в зеленом строительстве. М., 1955.
2. Вертепный И. И. Вегетативное размножение некоторых хвойных пород. Бюллетень Главного бот. сада, вып. 23, 1955.
3. Вехов Н. К., Ильин М. П. Вегетативное размножение древесных растений летними черенками. Л., 1934.
4. Кичунов Н. И. Дички и подвой для плодовых деревьев. 1930.
5. Ковтуненко И. П. Выращивание декоративных хвойных растений. Нальчик, 1955.
6. Северова А. И. Вегетативное размножение хвойных. 1951.